ՏՎՅԱԼՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Հյուսիսային Լոս Անջելես վարչաշրջանի արածաշրջանային կենտրոնը (NLACRC) տրամադրում է այս թարմացված ծանուցումը միջադեպի մասին, որն ազդել է մեր համակարգերում պահվող պաշտպանված առողջապահական տեղեկատվության վրա:

Ի՞նչ է տեղի ունեցել:

2024 թ. նոյեմբերի 28-ին մենք հայտնաբերեցինք կասկածելի գործունեություն մեր համակարգերում՝ շորթող ծրագրի իրադարձությանը համապատասխանող ցուցանիշներով: Մենք անմիջապես սկսեցինք հետաքննություն և քայլեր ձեռնարկեցինք իրավիճակը զսպելու համար: Սա ներառում էր դաշնային իրավապահ մարմիններին ծանուցելը և տվյալների անվտանգության և գաղտնիության մասնագետների ներգրավումը:

Հետաքննությունը հայտնաբերեց NLACRC համակարգչային համակարգերում 2024 թ. նոյեմբերի 20-ից մինչև 2024 թ. դեկտեմբերի 1-ը տեղի ունեցած չթույլատրված գործունեության ապացույցներ: Չթույլատրված դերակատարները որոշ տեղեկատվության պատճեններ են վերցրել նախքան որոշ համակարգչային համակարգեր գաղտնագրելը կամ կոդավորելը՝ դրանք անհասանելի դարձնելու համար: Մեր հետաքննությունը պարզեց, որ որոշ անձնական տվյալներ պատճենվել են մեր համակարգերից: Թեև ներկայումս այս միջադեպի հետ կապված անձնական տվյալների գողության կամ խարդախության ապացույցներ չկան, Ձեր վստահությունը կարևոր է մեզ համար:

Ի՞նչ տեղեկատվություն էր ներգրավված:

Հետաքննության արդյունքների հիման վրա հետևյալ տեսակի տեղեկատվությունը կարող է ազդեցության ենթարկված լինել.՝ անուն և ազգանուն, հասցեներ, ծննդյան ամսաթվեր, հեռախոսահամարներ, սոցիալական ապահովության համարներ, անձնագրերի համարներ, վարորդական իրավունքի կամ նահանգի կողմից տրված այլ ID համարներ, ԱՄՆ դաշնային մարմինների կողմից թողարկված ID համարներ, էլեկտրոնային փոստի հասցեներ, օգտատերերի անուններ եւ գաղտնաբառեր, ֆինանսական հաշվի տվյալներ, վճարային քարտի տվյալներ, առողջապահական պլանի համարներ, առողջապահական պլանի շահառուների համարներ, UCI-ի եւ հիվանդի ID համարներ (եզակի նույնականացման համար կամ կոդ, որը գեներացվել է մեր կողմից Ձեզ համար), բժշկական փաստաթղթերի համարներ, լաբորատոր արդյունքներ, դեղեր, ֆիզիկական և/կամ հոգեկան վիճակ, ախտորոշման և/կամ բուժման մասին տեղեկատվություն, դեղատոմսի կամ դեղորայքի մասին տեղեկատվություն, բուժման ծախսերի մասին տեղեկատվություն, հաշմանդամության կոդեր, վկայականի/լիցենզիայի համարներ և որոշ այլ բժշկական և առողջության ապահովագրության հետ կապված տեղեկություններ: Նշենք, որ այս ցուցակը նկարագրում է տուժած համակարգերում առկա տեղեկատվության ընդհանուր կատեգորիաները և ներառում է կատեգորիաներ, որոնք կարող են չկիրառվել պոտենցիալ ազդեցության ենթարկված յուրաքանչյուր անհատի համար:

Ինչ ենք մենք անում:

Մենք առաջին անգամ այս խնդրի մասին ծանուցումը տեղադրեցինք մեր կայքում 2025 թ. հունվարի 6-ին՝ փորձելով ցանկացած տուժած անհատի տեղյակ պահել իրավիճակի և քայլերի մասին, որոնք նրանք կարող են ձեռնարկել իրենց տեղեկատվությունը պաշտպանելու և/կամ NLACRC-ի հետ հաղորդակցվելու համար մեր պատասխանի կամ հարակից հարցերի մասին:

Տեղի ունեցածի մասին տեղյակ լինելով՝ մենք անմիջապես քայլեր ձեռնարկեցինք մեր համակարգերի և գործելակերպերի անվտանգությունը բարելավելու համար: Սա ներառում էր կիբեռանվտանգության սպառնալիքներից պաշտպանվելու համար մեր մոնիտորինգի գործընթացների բարելավումը, գաղտնաբառերի փոփոխությունը և գաղտնաբառերի գործելակերպերի ամրապնդումը: Այն բանից հետո, երբ պարզեցինք, որ չարտոնված դերակատարը մուտք է գործել մեր համակարգեր, մենք անմիջապես սկսեցինք վերլուծել առկա տեղեկատվությունը՝ հաստատելու պոտենցիալ ազդեցություն կրած անձանց ինքնությունը և տեղեկացնելու նրանց: Մենք ավելացրեցինք լրացուցիչ տեխնիկական պաշտպանություն մեր ներկայիս պաշտպանությանը և համակարգերը հնարավորինս արագ և ապահով վերադարձրեցինք առցանց: Բացի այդ, մենք շարունակում ենք աշխատել տվյալների անվտանգության և գաղտնիության առաջատար մասնագետների հետ, և այս միջադեպի մասին տեղեկացրել ենք համապատասխան պետական մարմիններին:

Ի՞նչ կարող են անել տուժած անհատները:

Զգուշությունից ելնելով՝ NLACRC-ն խրախուսում է անհատներին զգոն մնալ անձնական տվյալների գողության և խարդախության դեպքերից, վերանայել հաշիվների քաղվածքները և նպաստների բացատրության ձևերը, վերահսկել անվճար վարկային հաշվետվությունները կասկածելի գործունեության համար և հայտնաբերել սխալները: ԱՄՆ օրենսդրության համաձայն՝ անձինք իրավունք ունեն ստանալու տարեկան մեկ (1) անվճար վարկային հաշվետվություն երեք (3) խոշոր վարկային հաշվետվությունների բյուրոներից յուրաքանչյուրից: Լրացուցիչ տեղեկություններ և ռեսուրսներ ներկայացված են ստորև:

<u>Լրացուցիչ տեղեկություններ և քայլեր, որոնք կարող եք ձեռնարկել Ձեր անձնական տվյալները պաշտպանելու համար</u>

Կոնտակտային տվյալներ երեք (3) համազգային վարկային հաշվետվությունների գործակալությունների համար.

Equifax, PO Box 740241, Atlanta, GA 30374, www.equifax.com/personal/credit-report-services, 1-800-685-1111

Experian, PO Box 2104, Allen, TX 75013, www.experian.com/help, 1-888-397-3742

TransUnion, PO Box 2000, Chester, PA 19016, https://www.transunion.com/data-breach-help, 1-833-395-6938

Անվճար վարկային հաշվետվություն: Խորհուրդ է տրվում զգոն մնալ խարդախության և ինքնության գողության դեպքերի նկատմամբ՝ վերանայելով հաշիվների քաղվածքները և վերահսկելով Ձեր վարկային հաշվետվությունը չարտոնված գործունեության համար: Դուք կարող եք անվճար ձեռք բերեք Ձեր վարկային հաշվետվության պատճենը յուրաքանչյուր տասներկու (12) ամիսը մեկ անգամ՝ երեք (3) համազգային վարկային հաշվետվություններից յուրաքանչյուրից:

Ձեր տարեկան անվճար վարկային հաշվետվությունը պատվիրելու համար խնդրում ենք այցելել **www.annualcreditreport.com** կամ զանգահարել **1-877-322-8228** անվճար հեռախոսահամարով:

Դուք կարող եք նաև պատվիրել Ձեր տարեկան անվճար վարկային հաշվետվությունը՝ փոստով ուղարկելով լրացված տարեկան վարկային հաշվետվության հարցման ձևը (հասանելի է ԱՄՆ Առևտրի դաշնային հանձնաժողովի (FTC) կայքից www.consumer.ftc.gov) հետևյալ հասցեով՝ Annual Credit Report Request Service, P.O. Box 105281, Atlanta, GA 30348-5281:

Կոլորադոյի, Ջորջիայի, Մենի, Մերիլենդի, Մասաչուսեթսի, Նյու Ջերսիի, Պուերտո Ռիկոյի և Վերմոնտի բնակիչների համար. Դուք կարող եք անվճար ձեռք բերել Ձեր վարկային հաշվետվության մեկ (1) կամ մի քանի (կախված նահանգից) լրացուցիչ օրինակները: Դուք պետք է ուղղակիորեն կապվեք վարկային հաշվետվությունների գործակալություններից յուրաքանչյուրի հետ՝ նման լրացուցիչ հաշվետվություն(ներ) ձեռք բերելու համար:

Խարդախության մասին ահազանգ. Դուք կարող եք խարդախության մասին ահազանգ տեղադրել Ձեր ֆայլում՝ զանգահարելով վերը նշված երեք (3) ազգային վարկային հաշվետվությունների գործակալություններից մեկին (1): Խարդախության մասին ահազանգը պարտատերերին ասում է, որ հետևեն որոշակի ընթացակարգերի, այդ թվում նաև կապ հաստատեն Ձեզ հետ նախքան նոր հաշիվներ բացելը կամ Ձեր գոյություն ունեցող հաշիվները փոխելը: Այդ իսկ պատճառով խարդախության մասին ահազանգ տեղադրելը կարող է պաշտպանել Ձեզ, բայց նաև կարող է ուշացումների հանգեցնել, երբ ձգտում եք վարկ ստանալ:

Անվտանգության սառեցում: Դուք կարող եք անվճար ձեռք բերել Ձեր վարկային հաշվետվության անվտանգության սառեցում, որպեսզի պաշտպանեք Ձեր գաղտնիությունը և հաստատեք, որ վարկ չի տրվում Ձեր անունով առանց Ձեր իմացության: Դուք կարող եք նաև հեռացման հայտարարություն ներկայացնել՝ ինքնության գողության զոհ դառնալու հետևանքով Ձեր վարկային հաշվետվության մեջ տեղադրված տեղեկատվությունը հեռացնելու համար: Դուք իրավունք ունեք անվտանգության անվճար սառեցում դնել Ձեր վարկային հաշվետվության վրա կամ ներկայացնել հեռացման հայտարարություն՝ համաձայն Արդար վարկային հաշվետվությունների մասին օրենքի («FCRA»):

Անվտանգության սառեցումն արգելում է սպառողների հաշվետվության գործակալությանը հրապարակել Ձեր վարկային հաշվետվության ցանկացած տեղեկություն առանց Ձեր հստակ թույլտվության կամ հավանության: Անվտանգության սառեցումը նախատեսված է կանխելու վարկերի և ծառայությունների ձեր անունով հաստատումն առանց Ձեր համաձայնության: Երբ Դուք անվտանգության սառեցում եք դնում Ձեր վարկային հաշվետվության վրա, Ձեզ կտրամադրվի անձնական նույնականացման համար, գաղտնաբառ կամ նմանատիպ սարք, որը պետք է օգտագործեք, եթե նախընտրում եք հանել Ձեր վարկային հաշվետվության սառեցումը կամ ժամանակավորապես թույլատրել Ձեր վարկային հաշվետվության հրապարակումը կոնկրետ կողմին կամ կողմերին կամ սառեցումից հետո որոշակի ժամանակահատվածի համար:

Ձեր վարկային հաշվետվության վրա անվտանգության սառեցում դնելու համար Դուք կարող եք օգտվել առցանց գործընթացից, ավտոմատացված հեռախոսակապից կամ գրավոր հարցումից վերը նշված երեք (3) վարկային հաշվետվությունների գործակալություններից որևէ մեկին:

Անվտանգության սառեցում խնդրելիս պետք է ներառվեն հետևյալ տեղեկությունները (նկատի ունեցեք, որ եթե Դուք պահանջում եք վարկային հաշվետվություն Ձեր ամուսնու/կնոջ համար, ապա այս տեղեկատվությունը պետք է տրամադրվի նաև նրանց համար). (1) լրիվ անուն՝ միջին անվան սկզբնատառով և ցանկացած վերջածանցներով; (2) Սոցիալական ապահովության համար, 3) ծննդյան ամսաթիվ, 4) վերջին հինգ տարիների ընթացիկ հասցե և նախկին հասցեներ, և (5) ցանկացած կիրառելի միջադեպի զեկույց կամ բողոք իրավապահ մարմիններին կամ ավտոտրանսպորտային միջոցների բաժնին: Խնդրանքը պետք է ներառի նաև կառավարության կողմից տրված նույնականացման քարտի պատճենը և վերջին կոմունալ ծախսերի, բանկի կամ ապահովագրական հաշվետվության պատճենը: Շատ կարևոր է, որ յուրաքանչյուր օրինակ լինի ընթեռնելի և ցույց տա Ձեր անունը, ընթացիկ փոստային հասցեն և թողարկման ամսաթիվը:

FTC-ի և նահանգի գլխավոր դատախազությունների գրասենյակները: Եթե կարծում եք, որ ինքնության գողության զոհ եք կամ հիմքեր ունեք հավատալու, որ Ձեր անձնական տվյալները սխալ են օգտագործվել, պետք է անհապաղ կապվեք Ձեր նահանգի FTC-ի և/կամ գլխավոր դատախազության գրասենյակի հետ: Դուք կարող եք նաև կապ հաստատել այս գործակալությունների հետ՝ տեղեկություններ ստանալու համար, թե ինչպես կանխել կամ խուսափել ինքնության գողությունից:

Դուք կարող եք կապ հաստատել **Առևտրի դաշնային հանձնաժողովի** հետ՝ Consumer Response Center, 600 Pennsylvania Avenue, NW, Washington, DC 20580, www.ftc.gov/bcp/edu/microsites/idtheft/, 1-877-IDTHEFT (438-4338):

Ինքնության գողության մասին հաղորդում ներկայացնելը և ոստիկանության հաղորդում ստանալը: Դուք իրավունք ունեք ձեռք բերելու Միացյալ Նահանգներում ներկայացված ցանկացած ոստիկանության հաշվետվություն այս միջադեպի վերաբերյալ: Եթե Դուք խարդախության կամ ինքնության գողության զոհ եք, ապա իրավունք ունեք նաև ոստիկանության հաղորդում ներկայացնել:

Ալաբամայի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Attorney General's Office for the State of Alabama, Consumer Protection Division, 501 Washington Avenue, Montgomery, AL 36104, www.alabamaag.gov, 1-800-392-5658:

Արիզոնայի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ Գլխավոր դատախազությունից և FTC-ից խարդախության մասին նախազգուշացումների, անվտանգության սառեցման և ինքնության գողությունը կանխելու ուղղությամբ քայլերի մասին: Consumer Protection & Advocacy Section, 2005 North Central Avenue, Phoenix, AZ 85004, 1-602-542-5025:

Կալիֆորնիայի բնակիչների համար. Ինքնության գողությունից պաշտպանության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Կալիֆորնիայի Գաղտնիության պաշտպանության գրասենյակ (www.oag.ca.gov/privacy): Office of the Attorney General of California, 1300 I Street, Sacramento, CA 95814, 1-800-952-5225: Այս ծանուցումը չի հետաձգվել իրավապահ մարմինների հետաքննության արդյունքում:

Կոլորադոյի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ Գլխավոր դատախազությունից (www.coag.gov), FTC-ից և վարկային հաշվետվությունների գործակալություններից խարդախության մասին նախազգուշացումների և անվտանգության սառեցման մասին: Consumer Protection 1300 Broadway, 9th Floor, Denver, CO 80203, 1-720-508-6000:

Կոնեկտիկուտի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Connecticut Office of the Attorney General, 165 Capitol Avenue, Hartford, CT 06106, www.ct.gov/ag, 1-860-808-5318:

Կոլումբիայի շրջանի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ ինքնության գողությունից խուսափելու համար ձեռնարկվող քայլերի մասին FTC-ից (կոնտակտային տվյալները վերևում են) և հետևյալ հասցեով՝ District of Columbia Office of the Attorney General, 400 6th Street NW, Washington, D.C. 20001, consumer.protection@dc.gov, https://oag.dc.gov/, 1-202-737-3400:

Իլինոյսի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ Գլխավոր դատախազությունից, վարկային հաշվետվությունների գործակալություններից և FTC-ից խարդախության մասին ահազանգերի և անվտանգության սառեցման մասին (կոնտակտային տվյալները վերևում են): Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Illinois Office of the

Attorney General, 100 West Randolph Street, Chicago, IL 60601, https://illinoisattorneygeneral.gov/about/email_ag.jsp, 1-800-964-3013.

Այովայի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Iowa Office of the Attorney General, 1305 E. Walnut Street, Des Moines, IA 50319, consumer@ag.iowa.gov; www.iowaattorneygeneral.gov, 1-888-777-4590: Ձեզ խորհուրդ է տրվում տեղեկացնել անձնական տվյալների ցանկացած կասկածելի գողության մասին իրավապահ մարմիններին կամ Այովա նահանգի գլխավոր դատախազին:

Կանզասի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Kansas Office of the Attorney General, Consumer Protection Division, 120 SW 10th Ave, 2nd Floor, Topeka, KS 66612-1597, https://ag.ks.gov/, 1-800-432-2310:

Կենտուկիի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Kansas Office of the Attorney General, Consumer Protection Division, 120 SW 10th Ave, 2nd Floor, Topeka, KS 66612-1597, https://ag.ks.gov/, 1-800-432-2310:

Մերիլենդի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ այն քայլերի մասին, որոնք կարող եք ձեռնարկել ինքնության գողությունից խուսափելու համար FTC-ից (կոնտակտային տվյալները վերևում են) և հետևյալ հասցեով՝ Maryland Office of the Attorney General, Consumer Protection Division, 200 St. Paul Place, Baltimore, MD 21202, www.marylandattorneygeneral.gov, 1-888-743-0023:

Մասաչուսեթսի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Office of the Massachusetts Attorney General, 1 Ashburton Place, Boston, MA 02108, 1-617-727-8400, www.mass.gov/ago/contact-us.html: Դուք իրավունք ունեք ոստիկանության հաղորդում ստանալու, եթե ինքնության գողության զոհ եք:

Մինեսոտայի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Minnesota Office of the Attorney General, 445 Minnesota Street, Suite 1400, St. Paul, MN 55101, www.ag.state.mn.us, 1-800-657-3787:

Միսսուրիի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Missouri Office of the Attorney General, Consumer Protection Division, 120 SW Protection, 207 W. High St., P.O. Box 899, Jefferson City, MO 65102, www.ago.mo.gov, 1-800-392-8222:

Նևադայի բնակիչների համար. Դուք կարող եք դիմել հետևյալ հասցեով՝ Nevada Office of the Attorney General, Bureau of Consumer Protection, 100 N. Carson St, Carson City, NV 89701, www.ag.nv.gov, 1-702-486-3132:

Նյու Մեքսիկոյի բնակիչների համար. Սպառողներն իրավունքներ ունեն համաձայն FCRA-ի, ինչպիսիք են իրավունքը տեղեկանալու, թե արդյոք իրենց վարկային ֆայլում տեղեկատվությունն օգտագործվել է իրենց դեմ, իրավունք իմանալու, թե ինչ կա իրենց վարկային ֆայլում, իրավունք խնդրելու իրենց վարկային գնահատականը և իրավունք վիճարկելու ոչ ամբողջական կամ ոչ ճշգրիտ տեղեկատվությունը:
Բացի այդ, համաձայն FCRA-ի, սպառողների հաշվետվության բյուրոները պետք է ուղղեն կամ ջնջեն ոչ ճշգրիտ, ոչ ամբողջական կամ չստուգելի տեղեկատվությունը; սպառողների հաշվետվություն ներկայացնող գործակալությունները չեն կարող ներկայացնել հնացած բացասական տեղեկատվություն; սպառողների ֆայլերի հասանելիությունը սահմանափակ է; սպառողները պետք է համաձայնություն տան, որ վարկային հաշվետվությունները տրամադրվեն գործատուներին; սպառողները կարող են սահմանափակել վարկի և ապահովագրության «նախապես ստուգված» առաջարկները՝ հիմնվելով իրենց վարկային

հաշվետվության տեղեկատվության վրա; և սպառողները կարող են վնասների փոխհատուցում պահանջել խախտողներից: Սպառողները կարող են ունենալ լրացուցիչ իրավունքներ FCRA-ի ներքո, որոնք ամփոփված չեն այստեղ: Ինքնության գողության զոհերը և ակտիվ ծառայության մեջ գտնվող զինվորականներն ունեն հատուկ լրացուցիչ իրավունքներ՝ համաձայն FCRA-ի: Մենք խրախուսում ենք սպառողներին վերանայել իրենց իրավունքները FCRA-ի համաձայն՝ գրելով հետևյալ հասցեով, Consumer Response Center, Room 130-A, Federal Trade Commission, 600 Pennsylvania Ave. N.W., Washington, D.C. 20580, կամ այցելելով www.consumerfinance.gov/f/201504_cfpb_summary_your-rights-under-fcra.pdf:

Նյու Յորքի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ անվտանգության խախտումների արձագանքման և ինքնության գողության կանխարգելման և պաշտպանության մասին տեղեկությունների վերաբերյալ FTC-ից (կոնտակտային տվյալները վերևում են) և հետևյալ հասցեով՝ New York Office of the Attorney General, Office of the Attorney General, The Capitol, Albany, NY 12224-0341, https://ag.ny.gov, 1-800-771-7755:

Հյուսիսային Կարոլինայի բնակիչների համար. Դուք կարող եք տեղեկություններ ստանալ ինքնության գողությունը կանխելու մասին FTC-ից (կոնտակտային տվյալները վերևում են) և հետևյալ հասցեով՝ North Carolina Office of the Attorney General, Consumer Protection Division, 9001 Main Service Center, Raleigh, NC 27699-9001, www.ncdoj.gov, 1-877-566-7266 or 1-919-716-6400: Ձեզ խորհուրդ է տրվում տեղեկացնել ինքնության ցանկացած կասկածելի գողության մասին իրավապահ մարմիններին կամ Հյուսիսային Կարոլինայի գլխավոր դատախազին:

Օրեգոնի բնակիչների համար. Oregon Department of Justice, 1162 Court Street NE, Salem, OR 97301-4096, www.doj.state.or.us/, 1-877-877-9392: Ձեզ խորհուրդ է տրվում տեղեկացնել ինքնության ցանկացած կասկածելի գողության մասին իրավապահ մարմիններին, FTC-ին և Օրեգոնի գլխավոր դատախազին:

Փենսիլվանիայի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Pennsylvania Office of the Attorney General, Bureau of Consumer Protection, 15th Floor, Strawberry Square, Harrisburg, PA 17120, www.attorneygeneral.gov, 1-800-441-2555:

Ռոդ Այլենդի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Rhode Island Office of the Attorney General, Consumer Protection Division, 150 South Main Street, Providence, RI 02903, www.riag.ri.gov, 1-401-274-4400: Դուք իրավունք ունեք ներկայացնել կամ ստանալ ոստիկանության որևէ հաղորդում այս միջադեպի վերաբերյալ:

Հարավային Կարոլինայի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ South Carolina Department of Consumer Affairs, 293 Greystone Boulevard, Suite 400, Columbia, SC 29210, 1-800-922-1594:

Տեխասի բնակիչների համար. Դուք կարող եք կապ հաստատել հետևյալ հասցեով՝ Texas Office of the Attorney General, Office of the Attorney General, PO Box 12548, Austin, TX 78711-2548, www.texasattorneygeneral.gov, 1-800-621-0508:

Վայոմինգի բնակիչների համար. Այս ծանուցումը չի հետաձգվել իրավապահ մարմինների հետաքննության արդյունքում:

Բժշկական տեղեկատվության պաշտպանություն:

Եթե Դուք մտահոգված եք Ձեր բժշկական տեղեկատվությունը պաշտպանելու համար, հետևյալ գործելակերպերը կարող են լրացուցիչ պաշտպանություն ապահովել բժշկական ինքնության գողությունից պաշտպանվելու համար:

- Կիսվեք Ձեր առողջության ապահովագրության քարտերով միայն Ձեր բուժաշխատողների և ընտանիքի այլ անդամների հետ, ովքեր ապահովագրված են Ձեր ապահովագրական ծրագրով կամ ովքեր օգնում են Ձեզ Ձեր բժշկական օգնության հարցում:
- Վերանայեք Ձեր «նպաստների բացատրության հաշվետվությունը », որը ստանում եք Ձեր առողջության ապահովագրության ընկերությունից: Դիմեք Ձեր ապահովագրական ընկերությանը կամ խնամողին ցանկացած իրի համար, որը Դուք չեք ճանաչում: Անհրաժեշտության դեպքում կապվեք խնամողի հետ նպաստների բացատրության հաշվետվության վերաբերյալ և խնդրեք բժշկական փաստաթղթերի պատճենները հնարավոր մուտքի ամսաթվից (նշված է վերևում) մինչեւ ընթացիկ ամսաթիվը:
- Ձեր ապահովագրական ընկերությունից խնդրեք ընթացիկ տարեկան հաշվետվություն բոլոր ծառայությունների մասին, որոնք վճարվել են Ձեզ համար՝ որպես շահառու: Դիմեք Ձեր ապահովագրական ընկերությանը կամ խնամողին ցանկացած իրի համար, որը Դուք չեք ճանաչում: